# ԲՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարարության էլեկտրոնային պարբերաթերթ 3/2017



## Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը թևակոխում է նոր փուլ

Փետրվարի 1-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում կայացել է ՀՀ վարչապետի որոշմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և ստորերկրյա ջրերի օգտագործումը նորմավորելու նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստը, որը վարել է ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: Քննարկման հիմքում Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրն էր: Ներկայացված նախագծով սահմանվում են շուրջ երեք տասնյակ միջոցառումներ, որոնք ակնկալվող արդյունքի տեսանկյունից առավել արդյունավետ կդարձնեն ջրային ռեսուրսների կառավարման համակարգը: Աշխատանքային խմբի առաջին հանդիպումից հետո գերատեսչությունները սահմանված ժամկետում ներկայացրել էին համապատասխան առաջարկություններ, որոնք ներառվել էին ծրագրում: Նշվել է օրենսդրական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը՝ համապատասխան օրենքներում փոփոխությունների կատարումն ու ենթաօրենսդրական ակտերի ընդունումը: Ծրագրով նախատեսվում է Ախուրյանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանների ընդունում, ինչը հնարավորություն կտա հաշվարկել տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները, կատարել տարածքի ջրի առաջարկի և պահանջարկի վերլուծություն:

*Շարունակությունը՝ էջ 2 /*



## • Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը թևակոխում է նոր փուլ

*Սկիզբը՝ էջ 1 /*

Նախատեսվում են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք կներառեն ջրային ռեսուրսների պետական կադաստրի կատարելագործման, հիդրոերկրաբանական թվայնացված քարտեզի և ստորերկրյա ջրավազանի եռաչափ մոդելի մշակման, բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացներ: Մեծածավալ աշխատանքներ կիրականացվեն նաև ձկնաբուծական, ոռոգման և խմելու-կենցաղային նպատակներով ջրօգտագործման համակարգում, այդ թվում՝ տեսչական ստուգումներ ռիսկային ջրօգտագործողների մոտ, կլիկվիդացվեն լցված, ոչ միսանի հորատանցքերը, կվերանայվեն ձկնաբուծական տնտեսություններում ջրի քանակական նորմաների համաձայն ջրօգտագործման թույլտվությունները և այլն: Քննարկման ընթացքում հնչած մի շարք առաջարկություններ և ուղղումներ կներկայացվեն արդեն միջգերատեսչական աշխատանքային խմբի հաջորդ նիստի ընթացքում՝ մեկ շաբաթից:

## Անհանգստության պատճառները լիովին հիմավոր են



-Երկարատև ձմռան և նորմայից ավելի ձյան տեղումների պատճառով գարնան սկզբին և ձնհալի ժամանակ Երևանում կարող է ստեղծվել վտանգավոր իրավիճակ, հատկապես եթե կդիտվի ջերմաստիճանի կտրուկ բարձրացում, - ահազանգում է «Էկոլուր» կայքը: Եվ բնավ պատահական չէ, որ ստեղծված իրավիճակը քննարկվեց նաև ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի ժամանակ:

-Բնական ջրատար և սելավատար Գետառ գետը փակված է խողովակի մեջ, և ջրհոսքը խախտված է: Չնայած Երևանի քաղաքապետարանի հայտարարությանը, որ գետի հունն ամեն տարի մաքրվում է, դժվար է վստահ լինել, որ հնարավոր կլինի լիովին մաքրել ձմռանը Գետառի փակված հատվածը: Երկար, ցուրտ և ձնառատ 3-4 ամիսների ընթացքում կուտակված աղբի հետևանքով սելավային հոսքերը չեն կարող առանց խոչընդոտի անցնել գետի այս հատվածով: Մյուս կողմից ավելանում են այլ լուրջ ռիսկեր: Երևանի կոմունիկացիոն համակարգը վատ վիճակում է, գերծանրաբեռնված է: Իսկ կանաչ տարածքները, հողային բաց տարածքները, բակերը, որոնք կարող էին իրենց վրա վերցնել ջրային հոսքեր, ասֆալտապատված են: Նոր ասֆալտապատված շատ տարածքներում լյուկեր չկան: Ձնից ճանապարհների մաքրման ժամանակ ձյունը կուտակվում է ճանապարհների եզրին, ինչն ավելացնում է քառակուսի մետր տարածքի վրա ծանրաբեռնվածությունը, - իր անհանգստությունն է հայտնում «Էկոլուրը»:

# Հայաստանն իր դիրքորոշման մեջ հենվում է արդարության սկզբունքի վրա

Հունվարի 31-ին տեղի է ունեցել «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի ընդլայնված նիստը: Խորհրդի անդամների և հրավիրված միջազգային փորձագետների մասնակցությամբ քննարկվել են Հայաստանի հետագա քայլերը և այլ պետությունների հետ համատեղ աշխատանքը` Փարիզյան կլիմայական համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո: Հանդիպման նպատակն է բարձրացնել գերատեսչությունների և այլ շահառուների ընդհանուր իրազեկությունն այն հարցի շուրջ, թե ինչ հնարավորություններ է ընձեռում և, միաժամանակ, մարտահրավերներ առաջադրում Փարիզյան համաձայնագրի իրականացումը Հայաստանի տնտեսությանն ու հասարակությանը: Միջոցառմանը քննարկվել են նաև տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականությունների և գործողությունների համակարգման այն տարբերակները, որոնք կերաշխավորեն երկրի զարգացման` ցածր արտանետումների և կլիմակայունության ուղղով ընթացքը:



Իր ողջույնի խոսքում ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը նշել է, որ Հայաստանն իր դիրքորոշման մեջ հենվում է արդարության սկզբունքի վրա` նկատի ունենալով կլիմայական համակարգի վրա ներգործելու և կլիմայի փոփոխությունը զսպելու աշխարհի բոլոր մարդկանց իրավահավասարությունը: «Ելնելով այդ սկզբունքից` Հայաստանը պատրաստակամություն է հայտնում սահմանափակել ջերմոցային գազերի իր գումարային արտանետումների բաժնեմասը 2015-2050 թթ. ժամանակահատվածում 633 միլիոն տոննայով, իսկ 2050 թ.-ին աստիճանաբար հասնել ջերմոցային գազերի «չեզոք արտանետումների»` տարեկան մոտ 7 միլիոն տոննա, իհարկե, մեզ համարժեք միջազգային ֆինանսական, տեխնոլոգիական ու կարողությունների ամրապնդման աջակցության ապահովման դեպքում: Այդ միջոցառումներն ու գործողությունները չպետք է հանգեցնեն սոցիալական և տնտեսական հետընթացի, այլ պետք է նպաստեն Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը»,- շեշտել է նախարարը:

Ողջույնի խոսք է հղել նաև Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Սվիտալսկին, ով նշել է Փարիզի համաձայնագրի կարևորությունը, ԵՄ-ի և Հայաստանի միջև կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացի ոլորտում համագործակցության ընդլայնումը և արդյունավետ քննարկում մաղթել նիստի մասնակիցներին:

Հանդիպման ընթացքում «Կլիմա Արևելք» ծրագրի միջազգային փորձագետների կողմից ներկայացվել են Փարիզյան համաձայնագրի իրականացման հիմնական դրույթներն ու գործողությունների ռեժիմը: ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ազգային համակարգող Արամ Գաբրիելյանն անդրադարձել է ՀՀ դիրքորոշմանը, Փարիզյան համաձայնագրի դրույթների ու Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման մեխանիզմներին: Շեշտվել է է կլիմայի փոփոխության հարցերով կրթական դասընթացների և իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը:

# Մասնագետները հիմնախնդիրները ուսումնասիրում են տեղերում



Շարունակվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»-ի, մասնագետների գործուղումները ՀՀ տարածքի համապատասխան ազդակիր համայնքներ` Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Տավուշի, Լոռիի, Վայոց ձորի մարզեր` բնապահպանական փորձաքննական գործընթացի նախնական փուլի եզրակացության և տեխնիկական առաջադրանքի նախագծերը հասարակայնությանը ներկայացնելու և հասարակական քննարկումներին մասնակցելու համար: Այդ նպատակով, օրենքով սահմանված կարգով հասարակական լսումներն իրականացնելու համար ուղարկվել են ծանուցումներ` ՀՀ մարզպետներին, ազդակիր համայնքների ղեկավարներին և ձեռնարկողներին: Կազմակերպության մասնագետը մասնակցել է նաև «Հայաստանի վերականգնող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի կողմից կազմակերպված «Արևային էներգետիկայի ներդրումային» համաժողովի քննարկումներին:

## Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ներկայացրել է ոլորտում արված գործերի եւ գերակա խնդիրների առավել ուշագրավ դրվագները



Կառավարությունում վարչապետի գլխավորությամբ շարունակվել է ՀՀ պետական կառավարման մարմինների գնահատված կատարողականների և ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի ու գերակա խնդիրների կատարման մասին հաշվետվությունների քննարկումը: 2016 թ. ընթացքում կատարված աշխատանքների ու դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվությունով հանդես է եկել նաև ՀՀ բնապահպանության նախարարը:

Արծվիկ Մինասյանը զեկուցել է, որ նախորդ տարվա ընթացքում իրականացվել է Սևանա լճում ձկան պաշարների հաշվառում և արձանագրվել սիգի պաշարների 38,9 տոկոս աճ, մատնանշել է «իշխան» տեսակի բնական վերարտադրության ուղղությամբ առկա խոչընդոտները: Նախորդ տարվա գործունեության դրական արդյունքներից մեկն էլ այն է, որ ստեղծվել է նաև էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն, որն ամփոփում է ոլորտի հնարավորություններն ու դրանք տրամադրում զբոսաշրջային օպերատորներին: Ներդրվել է Արարատյան դաշտավայրում ջրային պաշարների կառավարման ավտոմատ համակարգ, ստեղծվել են «Կանաչ» տնտեսության ազգային կենտրոնը, Ջերմուկ ազգային պարկը: Սևանա լճի ափամերձ տարածքների մաքրման աշխատանքները ևս նախորդ տարվա ընթացքում շարունակվել են, ներկայում մաքրված տարածքների մակերեսը կազմում է շուրջ 93 հազար հեկտար: 2016-ի ընթացքում իրականացվել են նաև 70 հեկտար անտառվերականգնողական աշխատանքներ: Նախարարը զեկուցել է նաև, որ աշխատանքներ են տարվում ազգային պարկերը հավատարմագրային կառավարման հանձնելու ուղղությամբ:

Վարչապետը հանձնարարել է հետևողական քայլեր իրականացնել բնապահպանության ոլորտի գործունեությունը կապիտալիզացնելու և արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

## Ուժեղացված ռեժիմով պահպանման աշխատանքները տալիս են իրենց ցանկալի արդյունքները



«Զանգեզուր» կենսոլորտային համալիր»-ի տնօրինության տակ գտնվող ԲՀՊՏ-ներում աշխատակիցների կողմից մասնավորապես՝ «Զանգեզուր» մասնաճյուղի «Սաղկասու» կոչվող տարածքում դիտարկվել են 3 հատ բեզոարյան այծ, 1 հատ նապաստակ, 12 հատ կաքավ, իսկ «Դարմանաձոր» կոչվող հանդամասում՝ 1 հատ բեզոարյան այծ:

Վայրի վողնաշարավոր կենդանիների որոշ տեսակների հաշվառման համար «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքի «Սոսու» դուրակ և «Շիկահող» մասնաճյուղի տարածքներում դիտարկվել են 3 հատ եվրոպական այծյամ, 2 հատ անտառային կզաքիս, 1 հատ փորսուղ, 2 հատ աղվես, 1 հատ նապաստակ և 12 հատ ճնագայլ: Հայտնաբերվել են նաև՝ գայլի, աղվեսի, փորսուղի, եվրոպական այծյամի, վայրի խոզի, եվրոպական լուսանի, եվրոպական անտառային կատվի, անտառային կզաքիսի և ճնագայլի ոտնահետքեր: «Բողաքար» պետական արգելավայրի մասնաճյուղում կատարվել են Կարմիր գրքի մեջ մտցված ռելիկտային և էնդեմիկ անտառային ծառատեսակների և թփերի հաշվառում:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքում շարունակվում են վայրի կենդանատեսակների գույքագրման և հաշվառման գործընթացը:

ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցները շարունակում են շուրջօրյա հերթապահությունները «Դիլիջան» ազգային պարկի տարածքում:

«Դիլիջան» ազգային պարկ»-ի աշխատակիցների կողմից շուրջօրյա հերթապահության «շրջայցերի» ժամանակ հայտնաբերվել է 2 անտառխախտման դեպք՝ ապօրինի 1 ծառահատում և 2,5 խ.մ ապօրինի կերպով դուրս բերված փայտանյութ, որոնց համար կազմվել են անտառխախտման արձանագրություններ և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին և Դիլիջանի ոստիկանության բաժին: Պարկ-ի տարածքում շարունակվում է քամատապալ, հողմատապալ ծառերի հաշվառման գործընթացը:

# ՀՀ բնապահպանական պետական տեսչությունը 23-27.01.2017 թ. ժամանակահատվածում

ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից 23-27.01.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 250 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 4 որոշում և հաշվարկվել 390 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Մասնավորապես՝

**Բուսական աշխարհի պահպանության ոլորտ՝**

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50 հազ. դրամի և հաշվարկվել է 184.5 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝ Վայոց ձորի տարածքային բաժնի կողմից ֆիզիկական անձի նկատմամբ ապօրինի ծառահատման համար կայացվել է 50 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 12 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Լոռու տարածքային բաժնի կողմից ֆիզիկական անձի նկատմամբ ապօրինի հատված 5 ծառի համար հաշվարկվել է 172.5 հազ. դրամ ի շրջակա միջավայրին հասցված վնաս: Վարչական վարույթն ընթացքի մեջ է:

Բնապահպանական և բնօգտագործման վճարի եռամսյակային հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու համար կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 100 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից՝ Կոտայքի տարածքային բաժնի կողմից 1 տնտեսվարողի նկատմամբ կայացվել է 50 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում:

Շիրակի տարածքային բաժնի կողմից տնտեսվարողի նկատմամբ կայացվել է 50 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում:

**Հողերի պահպանության ոլորտ՝**

Սյունիքի տարածքային բաժնի կողմից «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի 29.11.2016 թ. թափոնակույտի վթարի հետևանքով արտահոսած արդյունաբերական թափոններով հողի վերին շերտի աղտոտման համար հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված վնաս և նյութերը ներկայացվել դատախազություն:




**Փայտանյութի ապօրինի տեղափոխում՝**

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 100 հազ. դրամի և հաշվարկվել է 208 հազ. դրամի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝ Տավուշի տարածքային բաժնի կողմից անցկացրած ստուգայցերի ընթացքում հայտնաբերված խախտման համար 1 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 100 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 208 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

**Ապօրինի որսի իրականացման համար՝**

Բնապահպանական պետական տեսչության վարչարարության և փորձաքննության բաժնի կողմից դատական ակտերի հարկադիր կատարման է ներկայացվել 59 գործ՝ ավարտված վարույթները վերսկսելու համար:

Ընդհանուր առմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կիրառած նախորդ պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0.75 մլն. դրամ:

# Բնության թանգարանը այցելողների սիրելի վայր

Գնալով ավելանում է թանգարան այցելողների թիվը: Այն տարեսկզբից մինչև այժմ կազմում է մոտ 240 այցելու, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածը:

Թանգարան այցելողները ներկայացնում են հասարակության տարբեր շերտեր՝ դպրոցականներ, ուսանողներ, մեծահասակներ, նաև ընտանիքներով այցեր են լինում: Այս շաբաթ թանգարան են այցելել Շահիդ Ֆահմեդի կրթահամալիրի 27 աշակերտ, Ագրարային համալսարանի քոլեջի, ԵՊՄՀ-ի 20-ից ավելի ուսանողներ, 3 ընտանիք՝ թվով 10 հոգի և 40 անհատներ:

Ֆլորայի և ֆաունայի հանդեպ այցելուների հետաքրքրությունը նպաստում է, որպեսզի թանգարանի էքսպոզիցիան օրեցօր համալրվի հազվագյուտ նմուշներով: Թանգարանի բնապահպանական արժեք ներկայացնող հավաքածուների ֆոնդն իր ճանաչողական նշանակությամբ առաջիկայում կգրավի ոչ միայն աշակերտների և ուսանողների ուշադրությունը, այլև կարող է դառնալ գիտնական-հետազոտողների սիրելի հավաքատեղերից մեկը: Այստեղ մի առանձնակի սիրով և պրոֆեսիոնալ մոտեցումներով այցելուներին են ներկայացվում հայոց բնաշխարհի գանձերը: Այցելուներից մեկը տպավորությունների մատյանում ինքն իրեն խոսք է տվել՝ «Հիացած եմ, ապրեցի իմ կյանքի լավագույն պահերից մեկը, խոստանում եմ այստեղ գալ երեք ամիսը մեկ»:

# Լարված քննարկում հասարակական խորհրդում



ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստում քննարկվել են հասարակության լայն խմբերի մոտ հետաքրքրություն ներկայացնող և բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված հերթական հարցերը: Հասարակական խորհրդի նախորդ նիստում արծարծվել էր Ամուլսարի ոսկու հանքավայրի տարածքից Մատնունի ծիրանավոր կարմրագրքային բուսատեսակի տեղափոխման հարցը: Հասարակական խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանի հանձնարարությամբ ՀՀ բնապահպանության նախարարության իրավաբանական վարչությունն ուսումնասիրել էր վերոհիշյալ գործընթացի կարգավորման իրավական հիմքերը: Իրավաբանական վարչության պետ Խաչատուր Խաչատրյանը խորհրդի անդամներին հայտնել է, որ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման շրջանակներում Մատնունի ծիրանավոր բուսատեսակի տեղափոխումը չի հակասում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին:

Հասարակական խորհրդի անդամ «Լիդիան Արմենիա» ընկերության տնօրեն Հայկ Ալոյանը ներկայացրել է լուսանկարներ, որոնք փաստում են, որ հանքավայրի տարածքից տեղափոխված Մատնունի ծիրանավոր բուսատեսակը հարմարվել է նոր միջավայրում: Վերջինս հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին առաջարկել է մինչև Ամուլսարի նախագծի վերաբերյալ հրապարակային դիտարկումներ անելը՝ մասնագիտական քննարկումներ կազմակերպել «Լիդիան Արմենիա» ընկերության գրասենյակում՝ բնապահպան-մասնագետների մասնակցությամբ:

Խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը՝ նկատելով, որ Ամուլսարի նախագծային և ՇՄԱԳ փաստաթղթերը և ուսումնասիրությունները ծավալուն են (մոտ 8000 էջ), անհարժեշտ է համարել այն հանրությանն իրազեկելը, իսկ դրանց հիմնավոր ուսումնասիրությունը մասնագետներին հնարավորություն կտա ավելի փաստարկված հանդես գալ: Առաջարկն ընդունվել է նաև հասարակական կազմակերպությունների անդամների կողմից:

Խորհուրդը հրատապ կարգով քննարկել է հասարակական կազմակերպությունների բարձրացրած Հրազդանի և Գետառի սելավատարների և Երևանի սելավընդունիչների խնդիրները: Ներկայացնելով հարցն օրակարգ արտահերթ ընդգրկելու առաջնայնությունը:

Հասարակական խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը շեշտել է, որ շրջակա միջավայրին առնչվող ցանկացած մտահոգության ՀՀ բնապահպանության նախարարությունն արձագանքելու է և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ մշակելու է դրանց լուծման մեխանիզմներ: Խնդիրը ներկայացրել է ԵՊՀ դասախոս Թրահել Վարդանյանը, ով, հիշատակելով համամոլորակային կլիմայական փոփոխություններով պայմանավորված երևույթները, մասնագիտական փաստարկներով մտահոգություն է հայտնել Երևանի սելավատարների և սելավընդունիչների համակարգի անբավարար հզորությունների և ենթակառուցվածքների վերաբերյալ: Բանախոսը նշել է, որ մեծ են ռիսկերը, որ սելավի դեպքում էական վնասներ կհասցվեն մայրաքաղաքին:

Նիստին հրավիրված Երևանի քաղաքապետարանի Կոմունալ տնտեսության վարչության պետ Հրայր Անտոնյանը տեղեկացրել է, որ մայրաքաղաքի բյուջեով նախատեսված գումարներով յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին իրականացվում է հեղեղատարների մաքրման աշխատանքներ: Հասարակական խորհրդի անդամներն իրենց ելույթներում շեշտել են, որ խնդիրն ունի նաև քաղաքաշինական բաղադրիչ: «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Կարապետ Օհանյանը ներկաներին տեղեկացրել է ընկերության կողմից այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին, բայց նաև նկատել, որ Երևանի սելավատար համակարգը նախորդ դարի հիսունականների հնացած նախագծի վրա է կառուցված:

*Շարունակությունը՝ էջ 7 /*

## • Լարված քննարկում հասարակական խորհրդում

*Սկիզբը՝ էջ 6 /*

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները բարձրացրել են նաև Հրազդան և Գետառ գետերի՝ կոյուղաջրերով և կենցաղային աղբով աղտոտվածության հիմնահարցը: Արծվիկ Մինասյանն առաջարկել է հասարակական խորհրդի հաջորդ նիստի օրակարգ կրկին ընդգրկել քննարկվող հարցը,հրավիրել մասնագետներ նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից և այլ լիազոր մարմիններից, մշակել և ներկայացնել լուծումների մեխանիզմներ: Հասարակական խորհրդի նախագահը նաև տեղեկացրել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն առաջիկայում նախաձեռնելու է «Անաղբ Հայաստան» միջոցառումների ծրագիր, որ կընդգրկի նաև այն գետավազանները, որտեղ առկա է ռեկրիացիոն միջավայր, այդ թվում նաև Հրազդանի կիրճը: Միջոցառումների շրջանակներում կդիտարկվեն նաև բարձրացված հիմնահարցերը: Նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության գործունեության 2017 թ. ծրագրում ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ ընդգրկված է ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակում, որը նույնպես նպատակաուղղված է վեր հանված խնդիրների լուծմանը:



«Բնապահպան իրավաբանների և մասնագետների երիտասարդական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Էրիկ Գրիգորյանը ներկայացրել է Բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը և դրա կատարելագործման, հասցեական օգտագործման հնարավորությունները: Բանախոսը շեշտել է, որ ներկայում գործող վճարների համակարգը ձեռնարկողներին չի ստիպում առաջնորդվել բնապահպանական առաջնահերթություններով և պետք է վերանայվի այն:

Հասարակական խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանն հավելել է, որ խնդիրը գտնվում է նախարարության ուշադրության կենտրոնում և դրա լուծման նպատակով նախատեսվում է ՀՀ բյուջե մուտքագրված բնապահպանական, բնօգտագործման վճարներն ամբողջովին ուղղել բնապահպանական ծրագրերի իրականացմանը՝ համայնքների աջակցմանը, կանաչ աշխատատեղերի, տեխնոլոգիաների ներդրմանը: Այս գործընթացում ակնկալվում է նաև միջազգային դոնոր կառույցների կողմից ծրագրերի 50 տոկոսի չափով համաֆինանսավորում, ինչը լրացուցիչ միջոցների ներհոսք կապահովի Հանրապետության բնապահպանության ոլորտ: ՀՀ բնապահպանության նախարարն առաջնային է համարել Անկախության հռչակագրում ամրագրված դրույթը, ըստ որի՝ Հանրապետության բնական պաշարները համաժողովրդական սեփականություն են, և նախարարությունը իր բյուջետային ծրագրերում առաջնորդվելու է վերոհիշյալ դրույթով: Արծվիկ Մինասյանը նաև տեղեկացրեց, որ ներկայում մշակվում է բնավճարների այնպիսի համակարգ, որը չի խոչընդոտի տնտեսվարողի գործունեությանը, սակայն կխթանի արդյունավետ բնօգտագործումը, կբացառի ձեռնարկողի կողմից շրջակա միջավայրին վնաս հասցնելու և դրա դիմաց անհամաչափ տույժեր մուծելու տարբերակը: Ըստ նախարարի, այդ նպատակով կմշակվի նաև տույժերի վճարման այնպիսի համակարգ, որը կնախատեսի նաև վերահսկողական գործընթացում հասարակության ակտիվության խթանում՝ նյութական խրախուսման միջոցով:



«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ նախագահ Մարի Չախրյանը Հասարակական խորհրդի քննարկմանն է ներկայացրել Օրհուսի կոնվենցիայի առնչությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման համապատասխանության վերաբերյալ Համապատասխանության կոմիտեի V/9a որոշման կատարման առաջընթացի հարցը: Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող Խաչատուր Խաչատրյանը նիստի մասնակիցներին տեղեկացրել է, որ Համապատասխանության կոմիտեի բարձրացրած բոլոր հարցերով ձեռնարկվել են քայլեր, մշակվել են համապատասխան օրենքների փոփոխությունների նախագծեր:

Քննարկումների ավարտին, հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացվող բազմաթիվ բնապահպանական խնդիրները և դրանց լուծման հրատապությունը, որոշվել է ավելի հաճախ հրավիրել ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստեր:

## Լրատվություն



### • Սատանի կամուրջ

Սատանի կամուրջը տրավերտինից բնական կամուրջ է Որոտան գետի կիրճում, Տաթև գյուղից արևելք: Երկարությունը մոտ 30 մետր է, լայնությունը՝ 50-60: Շրջակայքում կան բազմաթիվ հանքային աղբյուրներ, որոնք առաջացրել են շթաքարեր: Դարեր շարունակ այդ կրաքարային նստվածքները կուտակվելով առաջացրել են կամուրջը: Այդ կամրջով է անցնում Գորիս-Տաթև ավտոճանապարհը:

### • Տրիբերգի ջրվեժը

Տրիբերգի յոթ բարձրաթումբ ունեցող ջրվեժը Շվերցվալդե փոքրիկ քաղաքում՝ Գերմանիայի ամենաբարձր ջրվեժն է: Ջրի գահավիժելու ընդհանուր բարձրությունը, որը գալիս է Գուտախ գետով, 163 մետր է: Ջրվեժի հոսանքի երկայնքով կառուցվել են մի քանի դիտակետային հարթակներ, իսկ մութն ընկնելուն պես Տրիբերգը ամբողջովին լուսավորվում է: Սակայն ջրվեժի ամենատպավորիչ ու ցնցող տեսարանը, այդուհանդերձ, բացվում է, երբ նրան նայում են ներքևից, իսկ փոխարենը՝ վերևի հարթակներից հիանալի կերպով երևում է Տրիբերգ գողտրիկ քաղաքը: Դեպի ջրվեժ կա երեք մուտք, երեքն էլ՝ վճարովի: Ջրվեժից ոչ հեռու, անտառում, ծառերի գագաթներին ստեղծվել է «պարանների պուրակ», որի այցելուների համար կան տարիքային և այլևայլ սահմանափակումներ: Իսկ ջրվեժի ներքևի մասում գտնվում է լճակը, որում մշտապես սագեր են լողում:





### • Կայզերի կաղնին Բեռլինում

Բեռլինի Ֆրիդենաու թաղամասում է կանգնած Կայզերի կաղնին, որը տնկվել է 1879 թ. մարտի 22-ին, ի պատիվ Գերմանիայի Վիլհելմ առաջին կայսերի ծննդյան 82 ամյակի և կայսեր ու նրա տիկնոջ ոսկե հարսանիքի: Կայսրերի պատվին տնկվող կաղնիները ավանդույթ էր և լայնորեն տարածված էր Գերմանիայում: 1883 թ. Կայսեր երիտասարդ կաղնին տուժեց՝ հակասոցիալիստական օրենքի դեմ ընդվզումների ժամանակ, որը ընդունել էր Բիսմարկի կառավարությունը:

### • Ուշագրավ փաստեր աշխարհի էկո վիճակի մասին

***

Կալիֆորնիայի լողափերը աշխարհում համարվում են ամենամաքուրը: Սակայն վերջերս լողափում կազմակերպված շաբաթօրյակին, որին մասնակցում էին բնապահպան կամավորները, իրականացվեց աղբի մաքրման հաշվառում: Եվ պարզվեց հետևյալը. միայն մեկ օրվա ընթացքում հավաքվեց ու հաշվառվեց ավելի քան 330 հազար սիգարետի մնացորդ: Եվ սա այն դեպքում, որ կալիֆորնիական լողափերը կանոնավոր կերպով մաքրվում են: Պարզվում է դա էլ բավարար չէ:

***

Շվեդիան տարեկան ներկրում է մոտ 80 տոննա աղբ, քանի որ աղբից էլեկտրաէներգիայի ստացման պետական ծրագիրը զարմանալիորեն արդյունավետ դուրս եկավ: Աղբի հիմնական մատակարարը Նորվեգիան է, ընդ որում՝ նորվեգական կողմը հոգում է աղբի տեղափոխման ծախսերը, այնուհետև՝ շվեդները դրանից ստանում են էներգիա, իսկ ծանր մետաղներով և թույներով հագեցած մոխրի մնացորդները կրկին վերադարձնում են Նորվեգիային: Նկատենք, որ բոլոր տեսակ մնացորդների 96% Շվեդիայում կրկին վերամշակվում է և միայն չնչին մասն է թաղվում հողում:



***

Միայն ԱՄՆ-ում մեկ ժամվա ընթացքում դատարկվում և դեն է նետվում ավելի քան երկու միլիոն պլաստիկ շիշ, իսկ վերամշակման է գնում շատ փոքր քանակություն, ոչ ավելի քան 230-270 հազարը:

*Նախագիծը՝* ***Արծրուն Պետանյանի***
*Խմբագիր՝* ***Մանվել Մկրտչյան***
*Ձևավորումը՝* ***Նարինե Բաղդասարյանի***
*Նյութերը՝* ***ՀՀ ԲՆ Հասարակայնության հետ կապերի վարչության***
*Հեռախոս՝* ***011 818 517***